ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 881-Ա/2 «13» հունիսի 2023 թ.

## «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ 30 ԿՐԵԴԻՏԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Երաշխավորել «30 կրեդիտի շնորհման միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագիր»-ը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Երաշխավորել «30 կրեդիտի շնորհման միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի ուսումնաթեմատիկ պլան»-ը՝ համաձայն հավելված 2-ի:

Ժ" ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

6/13/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

**Հավելված 1**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և**
**սպորտի նախարարի**
**2023 թ. հունիսի 13-ի N 881-Ա/2 հրամանի**

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**
**30 ԿՐԵԴԻՏԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ**

Սույն կրթական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված է հանրակրթական պետական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող այն անձանց համար («Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր), ովքեր հանրակրթական հետևյալ առարկաներից՝ «**Մաթեմատիկա**», «**Ֆիզիկա**», «**Քիմիա**», «**Կենսաբանություն**», «**Աշխարհագրություն**», «**Անգլերեն**» որևէ առարկայի մասնագիտական ոլորտում ունեն բարձրագույն կրթություն, ցանկանում են ստանալ մանկավարժի հավաստագրում՝ կուտակելով 30 կրեդիտ մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով:

**Ծրագրի կառուցվածքը**

Ծրագիրը բաղկացած է 9 բաղադրիչներից, այդ թվում՝ 7 մոդուլներ՝

- Հանրակրթության բնագավառի օրենսդրություն (1 կրեդիտ՝ 10 ժամ լսարանային, 20 ժամ ինքնուրույն և արտալսարանային),
- ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում (4 կրեդիտ՝ 20 ժամ լսարանային, 100 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Ընդհանուր մանկավարժության գիտելիքներ (1 կրեդիտ՝ 10 ժամ լսարանային, 20 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Տարիքային և մանկավարժական հոգեբանության հիմունքներ (1 կրեդիտ՝ 10 ժամ լսարանային, 20 ժամ ինքնուրույն և արտալսարանային)

- Ներառական կրթություն (1 կրեդիտ՝ 10 ժամ լսարանային, 20 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Ուսումնառության գնահատում (2 կրեդիտ՝ 20 ժամ լսարանային, 40 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Պլանավորում (2 կրեդիտ՝ 20 ժամ լսարանային, 40 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Սովորողակենտրոն դասավանդման մեթոդաբանություն (5 կրեդիտ՝ 50 ժամ լսարանային, 100 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Առարկայի դասավանդման մեթոդիկա (6 կրեդիտ՝ 60 ժամ լսարանային, 120 ժամ ինքնուրույն և արտալսարանային)
- Մասնագիտական պրակտիկա, 4 կրեդիտ, 120 ժամ
- Ավարտական հետազոտական աշխատանք, 3 կրեդիտ, 90 ժամ

**Ծրագրի նպատակը**

Ծրագրի նպատակը տվյալ մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթությամբ մանկավարժի որակավորում չունեցող անձանց հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշներով ամրագրված պահանջներին համապատասխանեցումն է ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների, ուսուցման նորարական մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների, ուսուցման արդյունքների գնահատման, ուսումնական գործընթացի ներառականության ու մասնակցայնության ապահովման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների փոխանցման և արժեքների ու համապատասխան վերաբերմունքի ձևավորման միջոցով:

**Ծրագրի խնդիրները**

- Ծանոթացնել կրթության բնագավառի և ուսուցչի գործունեությանը վերաբերող օրենսդրական ակտերին, ՀՀ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված մոտեցումներին,
- ծանոթացնել դասավանդման ժամանակակից մեթոդներին, կարողունակությունների վրա հիմնված ուսուցման մոտեցումներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին, ձևավորել դրանց կիրառման գործնական կարողություններ,

- ծանոթացնել անձի զարգացման, ձևավորման, սոցիալականացման, տարիքային տարբեր կենսափուլերում անհատական ու հոգեբանական առանձնահատկություններին ու դրանց համապատասխան ուսումնառության գործընթացը կառուցելու ձևերին և միջոցներին:
- ծանոթացնել առարկայի չափորոշչին և ծրագրին, հիմնավորել ուսուցումը դրանց պահանջներին համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը,
- ձևավորել ուսումնական և մեթոդական նյութեր մշակելու, դասեր պլանավորելու և վարելու, դասեր վերլուծելու և գնահատելու կարողությունները,
- նպաստել ունկնդիրների կողմից ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հաճախակի կիրառմանը:

**Ծրագրի արդյունքում ակնկալվող վերջնարդյունքները**

Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին ունկնդիրը պետք է՝

**1) իմանա՝**

ա) հանրակրթության պետական չափորոշչի հիմնական դրույթները,

բ) ուսուցիչներին և սովորողներին ներկայացվող պահանջները,

գ) առարկայական չափորոշիչը, ծրագիրը, դասավանդման մեթոդիկան և գնահատման համակարգը,

դ) դպրոցականի տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները կոնկրետ առարկայի ուսուցման գործընթացում:

**2) Կարողանա՝**

ա) ստեղծել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ ուսումնական միջավայր, հաստատել հաղորդակցման ազատ ու բարեկիրթ մթնոլորտ սովորողների, նրանց օրինական ներկայացուցիչների (ծնողների, խնամակալների), գործընկերների՝ պաշտպանելով սովորողների իրավունքները,

բ) համակարգել, մեկնաբանել, ներկայացնել և վերլուծել տեղեկույթը, օգտագործել իր ձեռքբերումները ուսուցման գործընթացում,

գ) սովորողների մեջ ձևավորել ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորածը գործնականում կիրառելու կարողություններ,

դ) նպաստել սովորողների մեջ ինքնակառավարման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը,

ե) պլանավորել իր գործունեությունը և սահմանել ուսումնական նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները,

զ) դասավանդման գործընթացում արդյունավետ ներառել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին,

է) արդյունավետ հաղորդակցվելու և համագործակցելու ծնողների, գործընկերների և համայնքի հետ երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով,

ը) կիրառել դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ապահովել տարբերակված ուսուցման կազմակերպում,

թ) կանխատեսել և գնահատել սովորողի և սեփական գործունեությունը, վերլուծել և կատարել անդրադարձ, ապահովել հետադարձ կապ, կիրառել գնահատման տարբեր ձևեր,

ժ) համագործակցել գործընկերների հետ, կատարել փոխադարձ դասալսումներ, վերլուծել և ընդհանրացնել դրանք՝ փորձի փոխանակման, ներդրման ու տարածման արդյունավետության բարձրացման նպատակով,

ի) շարունակաբար, այդ թվում՝ ինքնակրթության միջոցով, կատարելագործել իր առարկայական ու մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները:

**3) Տիրապետի՝**

ա) ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների ձևավորման և զարգացման սկզբունքներին,

գ) կրթության ոլորտի հիմնախնդիրները վերհանելու, վերլուծելու և բարելավման ուղիների մասին սեփական կարծիք ունենալու կարողություններին,

դ) ուսուցման նորագույն տեխնոլոգիաներին, մեթոդներին և հնարներին, այդ թվում՝ հաշվի առնելով համընդհանուր ներառման քաղաքականությունը,

ե) սովորողների ստուգման և գնահատման համակարգերին՝ շեշտադրելով գնահատման տարբեր գործիքակազմերի, այդ թվում՝ ձևավորող գնահատմանը տիրապետելու անհրաժեշտությանը,

զ) կյանքի մշտապես փոփոխվող պայմաններում հանրակրթության մեջ ծագած հոգեբանական մարտահրավերների լուծմանը,

է) ռեֆլեքսիվ վերաբերմունք դրսևորելու սկզբունքներին,

ը) տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ինտեգրման հիմունքներին:

**Ծրագրի տևողությունը**

Ծրագրի տևողությունը 4 ամիս է (900 ժամի հաշվարկով, 1 ժամը՝ 45 րոպե): Դասընթացը կարող է իրականացվել առկա (դեմ առ դեմ), համակցված (առկա և հեռավար/առցանց), հեռավար ուսուցման կազմակերպման ձևերով:

**Ծրագրի ֆինանսական ապահովման իրականացմանը ներկայացվող պահանջները**

Ծրագրի իրականացման բյուջեն հաստատում է Գորիսի պետական համալսարանի գիտական խորհուրդը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվում է մեկ անձի համար՝ հաստատված նորմատիվային չափով:

**Հավաստագրի տրամադրումը**

Ունկնդիրը համարվում է դասընթացն ավարտած, եթե

- մասնակցել է յուրաքանչյուր մոդուլին հատկացված ժամաքանակի առնվազն 2/3-ին
- յուրաքանչյուր մոդուլի ամփոփիչ աշխատանքից ապահովել է առնվազն 60 % արդյունք
- անցել է համապատասխան մասնագիտական պրակտիկա,
- ներկայացրել է պահանջվող չափանիշներին համապատասխան հետազոտական աշխատանք,
- հավաքած կրեդիտների ընդհանուր գումարը կազմել է 30 կրեդիտ:

Ունկնդրի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը տրված է ստորև.

| N | **Մոդուլի անվանումը** | **Ընդհանուր ժամաքանակը** | **Կրեդիտը** |
|---|---|---|---|
| 1 | Հանրակրթության բնագավառի օրենսդրություն | 30 | 1 |
| 2 | ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում | 120 | 4 |
| 3 | Ընդհանուր մանկավարժության գիտելիքներ | 30 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Տարիքային և մանկավարժական հոգեբանության հիմունքներ | 30 | 1 |
| 5 | Ներառական կրթություն | 30 | 1 |
| 6 | Ուսումնառության գնահատում | 60 | 2 |
| 7 | Պլանավորում | 60 | 2 |
| 8 | Սովորողակենտրոն դասավանդման մեթոդաբանություն | 150 | 5 |
| 9 | Առարկայի դասավանդման մեթոդիկա | 180 | 6 |
| 10 | Մասնագիտական պրակտիկա | 120 | 4 |
| 11 | Ավարտական հետազոտական աշխատանք | 90 | 3 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 900 | 30 |

**Դասընթացավարներին ներկայացվող պահանջներ**

**Մասնագիտական կարողունակություններ**

**Դասընթացավարը պետք է ունակ լինի՝**

- կազմելու ուսումնական ծրագիր,
- մշակելու դասընթացի նյութերը,
- տիրապետի դասավանդման, գնահատման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին,
- դասակարգելու ուսուցման մեթոդիկաները և կատարելու արդյունավետ մեթոդիկայի ընտրություն,
- կիրառելու ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ ուսուցման գործընթացում,
- տիրապետի հետազոտական աշխատանքների կատարման սկզբունքներին:

**Ընդհանուր պահանջներ՝**

- կրթության ոլորտում ՀՀ ազգային որակավորումների շրջանակի առնվազն 7-րդ մակարդակին համադրելի որակավորում,
- վերջին 5 տարվա ընթացքում մանկավարժական կամ գիտամանկավարժական աշխատանքի, կրթության կառավարման ոլորտի առնվազն 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ,
- մեծահասակների հետ աշխատանքի փորձ,

- նախագծերի կառավարման փորձը, նախագծային ուսուցման փորձը կամ հավաստագրերը կդիտարկվեն որպես առավելություն:

**Ընդհանրական կարողունակություններ**

**Դասընթացավարը պետք է ունակ լինի՝**

- կառուցել արդյունավետ հարաբերություններ,
- միաժամանակ ձեռնարկելու և իրականացնելու մի քանի տարբեր գործողություններ,
- օգտագործելու համակարգչային տարբեր ծրագրեր և էլեկտրոնային դասավանդման գործիքներ,
- գնահատել իրականացված մոդուլի արդյունավետությունը և ներկայացնել հաշվետվություններ:

**Հավելված 2**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և**
**սպորտի նախարարի**
**2023 թ. հունիսի 13-ի Ν 881-Ա/2 հրամանի**

**ՈՒՍՈՒՄՆԱԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ**
**30 ԿՐԵԴԻՏԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ**

**Ծրագրի ուսումնաթեմատիկ պլանը՝ ըստ մոդուլների (բաղադրիչների)**

<table>
<tr><td colspan="4">Մոդուլի անվանում</td><td colspan="2">Կրեդիտ</td></tr>
<tr><td colspan="4">1. Հանրակրթության բնագավառի օրենսդրություն</td><td colspan="2">1</td></tr>
<tr><td colspan="6">Նպատակը</td></tr>
<tr><td colspan="6">Մոդուլի նպատակն է ունկնդիրներին ներկայացնել ՀՀ կրթության օրենսդրական հիմքերն ու բովանդակությունը՝ սեփական մասնագիտական գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով:</td></tr>
<tr><td rowspan="2">Հ/Հ</td><td rowspan="2">Մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները</td><td rowspan="2">Լսարանային ժամաքանակը</td><td colspan="2">Այդ թվում</td><td colspan="2">Մոդուլի բովանդակությունը</td></tr>
<tr><td>Տեսական պարապմունքների ժամերը</td><td>Գործնական պարապմունքների ժամերը</td><td>Թեմաներ<br>(տեսական, գործնական)</td><td>Ինքնուրույն աշխատանքներ</td></tr>
</table>

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Մոդուլի ավարտին Ունկնդիրը կիմանա՝**<br>- հանրակրթության ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքները, ՀՀ կառավարության, վարչապետի որոշումները և այլ իրավանորմատիվային ակտերը՝ սեփական մասնագիտական գործունեությունը արդյունավետ կազմակերպելու, հիմնավորելու, ուսումնական գործընթացում իրավահարաբերությունները բնականոն կարգավորելու նպատակով:<br>**Ունկնդիրը կկարողանա՝**<br>- պաշտպանել իր և սովորողների | 10 | 4 | 6 | **Թեմա 1.**<br>Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները և պարտականությունները:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Ուսուցիչը և հաստատության տնօրենը:<br>Ուսուցիչը և մանկավարժական մյուս աշխատողները:<br>Ուսուցիչը և սովորողը:<br>Ուսուցիչը և սովորողի ծնողը:<br>Սովորողի իրավունքները և պարտականությունները:<br>Սովորողի ծնողի իրավունքները և պարտականությունները:<br>Մանկավարժական աշխատողների իրավունքները և պարտականությունները:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Զիգզո, մտագրոհ, մտածիր – քննարկիր – կիսվիր (մեջբերումների վերլուծություն)<br><br>**Թեմա 2.**<br>Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժինների ընդհանրական բովանդակության ներկայացում:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝** | Իրավիճակային դեպքերի քննարկում, ունկնդիրները կներկայացնեն իրենց քննադատական ընկալումները: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրավունքները,<br>- ներկայացնել հանրակրթության պետական չափորոշչի կառուցվածքային գլխավոր բաղադրիչները և դրանց միջև առկա փոխադարձ կապերը,<br>- ներկայացնել ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները: | | | | Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը:<br>Հանրակրթության պետական չափորոշչի կառուցվածքային գլխավոր բաղադրիչների միջև առկա փոխադարձ կապերը:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Գաղափարների քարտեզագրում, Դիսնեյի մեթոդ:<br><br>**Թեմա 3**.<br>Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը:<br>Ուսուցչի ատեստավորման իրավական հիմքերը, ուսուցչի որակավորման տարակարգերը, դրանց բնութագրիչները և շնորհման չափանիշները:<br>Որակավորման տարակարգերին և ատեստավորմանը համապատասխան հավելավճար տալը:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Անսահմանափակ անհատական գաղափարների գեներացում:<br><br>**Թեմա 4.**<br>Հանրակրթական ուսումնական հաստատության | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնային պարտականությունները: **Գործնական աշխատանքների թեմաները՝** Ուսուցչի պաշտոնի նկարագիրը: Մանկավարժական այլ աշխատողների պաշտոնի նկարագրերը: **Գործնական աշխատանքների տեսակները՝** Գաղափարների փոխանցման մեթոդ: | |

| **Գնահատում** |
|---|
| Գնահատման ձևը՝ իրավիճակային վերլուծություն: Առաջադրանքները գնահատվում են ըստ նախապես կազմված ռուբրիկի: Առաջադրանքների գնահատումը ամփոփվում է ըստ բառային նկարագրիչի՝ «ստուգված» կամ «չստուգված»: Գնահատման չափանիշներն են՝ Տվյալ իրավիճակից բխող խնդիրների դուրսբերում, Խնդիրներին համապատասխան օրենսդրական հիմքի դուրսբերում, Ըստ օրենսդրական հիմքի՝ լուծումների առաջադրում: |

| | |
|---|---|
| **Օգտագործված գրականության ցանկ Էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ** | 1. ՀՀ Սահմանադրություն<br>2. «Կրթության մասին» ՀՀ օրենք<br>3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք<br>4. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն<br>5. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ (Հավելված N 1 ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման)<br>6. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ (Հավելված N 1 ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման) |

7. Հանրակրթության պետական չափորոշիչ (Հավելված N 2 ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման)
8. Հանրակրթության պետական չափորոշիչ (Հավելված N 2 ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման)
9. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով առարկայական փորձնական չափորոշիչներ և ծրագրեր (ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թվականի (ապրիլի 30-ի N 08-Լ- 27-Լ, մայիսի 7-ի 28-Լ ) հրամաններ)
10. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր (գործող)
11. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչ և օրինակելի ծրագիր (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի մարտի 4-ի N 367-Ա/2 հրաման)
12. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգ (Հավելված ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման)
13. Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգ (Հավելված ՀՀ կառավարության 2022 թ. ապրիլի 28-ի N 596-Ն որոշման)
14. Սեփական նախաձեռնությամբ կամավոր ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիր (Հավելված ՀՀ ԿԳՄՍՆ 2021 թ. հունվարի 26-ի N 21-Ն որոշման, ՀՀ ԿԳՄՍՆ հրաման N 77-Ն, 13.10.2021 թ.)
15. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգ (Հավելված N1 ՀՀ կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման, ՀՀ կառավարության 26.04.2018 թ. N525-Ն որոշում)
16. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու կարգը (Հավելված N3 ՀՀ կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման)

| | |
|---|---|
| | 17. ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը (Հավելված N4 ՀՀ կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման)<br>18. https://www.arlis.am/<br>19. http://escs.am/ |

| **Մոդուլի անվանում** | | | | | **Կրեդիտ** | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում | | | | | 4 | |
| **Նպատակը** | | | | | | |
| Մոդուլի նպատակն է ունկնդիրներին ներկայացնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ինտեգրման դերը դասավանդման կազմակերպման, դասի պլանավորման, գնահատման գործիքների մշակման և վերլուծության գործում: | | | | | | |
| Հ/Հ | Մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները | Լսարանային ժամաքանակը | Այդ թվում | | Մոդուլի բովանդակությունը | |
| | | | Տեսական պարապմունքների ժամերը | Գործնական պարապմունքների ժամերը | Թեմաներ (տեսական, գործնական) | Ինքնուրույն աշխատանքներ |
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
| 2 | **Մոդուլի ավարտին Ունկնդիրը կիմանա՝**<br>- ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորամուծություն | 20 | 5 | 15 | **Թեմա 1.**<br>Ուսուցման կառավարման համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում: | 1. Սահիկաշարի պատրաստում և զեկուցում. «ՈՒսուցման կառավարման համակարգերի հնարավոր |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ները, դրանց ազդեցությունը կրթության վրա, թվային ուսուցման իրականացման համար անհրաժեշտ հմտությունները, թվային ուսուցման տրամաբանությունը, թվային ուսուցման միտումները և դիդակտիկ մոդելները:<br>**Ունկնդիրը կկարողանա՝**<br>- ուսուցման կառավարման համակարգում ստեղծել դասարան, ընդգրկել աշակերտներ, տալ հանձնարարություններ, կատարել գրառումներ, վերբեռնել ֆայլեր, համօգտագործել ֆայլերը, ստեղծել թվային առաջադրանքներ և | | | | **Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Google Classroom հարթակը որպես առարկայական էլեկտրոնային ուսուցման հարթակ. գործառույթներ և հնարավորություններ:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Շրջված դասարան, ինտերակտիվ առաջադրանքներ:<br><br>**Թեմա 2.**<br>Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>emis.am էլեկտրոնային կառավարման համակարգ. ուսուցչի գործառույթներ և հնարավորություններ:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Շրջված դասարան, ինտերակտիվ առաջադրանքներ:<br><br>**Թեմա 3.**<br>Թվային առաջադրանքների ստեղծումը ուսուցման կառավարման համակարգերի թվային գործիքների միջոցով:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Ուսուցման կառավարման համակարգում դասարանի ստեղծում:<br>Աշակերտ-ուսուցիչ շփման կազմակերպում:<br>Նյութերի տեղադրում, թվային առաջադրանքների ստեղծում: Գնահատման ռուբրիկների ստեղծում:<br>Համաժամանակյա հանդիպումների կազմակերպում, | կիրառումը ուսումնական գործընթացում»:<br>2. «Ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով»:<br>3. «Համագործակցային խմբային կամ անհատական աշխատանքների իրականացում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով»<br>4. «Առարկայական ուսումնական բովանդակային թվային նյութերի ստեղծում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով»<br>5. Google Forms և |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գնահատման ռուբրիկներ, կազմակերպել համաժամանակյա հանդիպումներ, օգտվել օրացույցից,<br>- լրացնել էլեկտրոնային մատյանը,<br>- կիրառել առցանց գրատախտակի գործիքակազմը, կիսել և համօգտագործել այն,<br>- օգտվել ԿԳՄՍՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿՁՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր, օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով | | | | օրացույցի կիրառում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Շրջված դասարան, ինտերակտիվ առաջադրանքներ:<br><br>**Թեմա 4.**<br>Առցանց գրատախտակի գործիքակազմը:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Նախապես ընթերցել բաշխիչ նյութերը, որոնք նկարագրում են Jamboard, Padlet, Miro և Mural առցանց գրատախտակների առանձնահատկություններն ու հիմնական գործառույթները:<br>Գրանցվել Padlet, Miro և Mural միջավայրերում:<br>Ստեղծել Jamboard, Padlet, Miro և Mural առցանց գրատախտակներից որևէ մեկի վրա խմբային աշխատանքի ձևանմուշ, ձևանմուշի ակտիվ հղումը ուղարկել Google Classroom-ին:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Շրջված դասարան, ինտերակտիվ առաջադրանքներ:<br><br>**Թեմա 5.**<br>Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Օգտվել ԿԳՄՍՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿՁՆԱԿ-ի բլոգից, գտնել | wordwall կամ Learningapps գործիքների միջոցով ստեղծել և տարածել սովորողների ուսումնառության որակի քանակական և ձևավորող գնահատում իրականացնող թվային ռեսուրսներ:<br>6. Վերլուծել թեստերը՝ օգտագործելով Google Sheets և Microsoft Excel գործիքները:<br>7. Google Drive տիրույթում ստեղծել, տարածել ու պահպանել տեքստային / դասի պլաններ և այլն/ աղյուսակային /թեմատիկ պլաններ և այլն/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսել և համօգտագործել դրանք: | | | | անհրաժեշտ տեղեկատվությունը: Գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր: Գրանցվել https://learningapps.org/, https://h5p.org/content-types-and-applications, https://kahoot.com/, https://freeonlinesurveys.com/, օնլայն կրթական հարթակներում: Ստեղծել որևէ թվային առցանց առաջադրանք https://classroomscreen.com/, https://www.fortunewheel.com/, https://pickerwheel.com/, https://learningapps.org/, https://h5p.org/content-types-and-applications, Answergarden, Mentimeter, Mindmup, Canva, Edpuzzleհարթակներից որևէ մեկում՝ կախված դասի նպատակից և խնդիրներից, ակտիվ հղումը ուղարկել Google Classroom-ին: **Գործնական աշխատանքների տեսակները՝** Շրջված դասարան, ինտերակտիվ առաջադրանքներ: | և ցուցադրական /հաշվետվություններ և այլն / թվային ռեսուրսներ /Google Docs, Google Sheets, Google Slides/ |

**Գնահատում**

Գնահատման ձևը՝ պորտֆոլիո, որը կազմված է յուրաքանչյուր թեմայի մեկ գործնական առաջադրանքից և առնվազն երկու ինքնուրույն աշխատանքից:

Առաջադրանքները գնահատվում են ըստ նախապես կազմված ռուբրիկի: Առաջադրանքների գնահատումն ամփոփվում է ըստ

| | |
|---|---|
| բառային նկարագրիչի՝ ստուգված կամ չստուգված:<br>Գնահատման չափանիշներն են՝<br>Google Classroom հարթակի հնարավորությունների օգտագործում,<br>Սահիկաշարի կառուցվածք և դիզայն,<br>Դասի տարբեր փուլերում առցանց գործիքների կիրառում,<br>Գնահատման առցանց գործիքի կիրառում: | |
| **Օգտագործված գրականության ցանկ Էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ** | 1. Chechurin L., Chakir A., Kryuchkova O., Digital teaching in university environment, Lut University for Connect project, Erasmus+ (2022)<br>2. eLearning Industry. 2022. (The Right) Learning Modalities To Deliver Digital Learning: Part 1[online]<br>3. Raouna K., 2022. The 10 Best eLearning Authoring Tools: Review & Comparison. [online]<br>4. Khan A.I., Kaliteevskii V., Shnai I., Chechurin L. (2020) Analysis of Students' Performance in an Online Discussion Forum: A Social Network Approach. https://link.springer.com/chapter/10.1007/978-3-030-34983-7_66<br>5. Quinn J., Mceachen J., Fullan M., Mag Gardner and Drummy M. (2020). Dive into deep learning: tools for engagement. Thousand Oaks, California: Corwin, A Sage Company<br>6. Шейн Бирли, Как стать видеоблогером, ООО «Манн, Иванов и Фербер», Москва (2020)<br>7. Antonova, N., Shnai, I., Kozlova, M.: Flipped classroom in the higher education system: a pilot study in Finland and Russia. New Educ. Rev. 48(2), 17–27 (2017). https://doi.org/10.15804/tner.2017.48.2.01<br>8. Armstrong, P. (2010). Bloom's Taxonomy. Vanderbilt University Center for Teaching. Retrieved [todaysdate] from https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxonomy/.<br>9. https://wordwall.net/<br>10. https://wheelofnames.com/ru/<br>11. https://answergarden.ch/<br>12. https://www.mindmup.com/<br>13. https://www.canva.com/ |

| | |
|---|---|
| | 14. https://ru.padlet.com/<br>15. https://jamboard.google.com/<br>16. https://miro.com/<br>17. https://quizizz.com/<br>18. https://www.google.com/intl/ru/forms/about/<br>19. https://learningapps.org/<br>20. https://kahoot.com/<br>21. www.h5p.org<br>22. www.pickerwheel.com<br>23. https://www.mural.com/<br>24. https://matyan.emis.am/#/login |

| **Մոդուլի անվանում** | | | | | **Կրեդիտ** | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Ընդհանուր մանկավարժության գիտելիքներ | | | | | 1 | |
| **Նպատակը** | | | | | | |
| Մոդուլի նպատակն է ձևավորել մանկավարժական գիտության տեսական-մեթոդաբանական հիմունքների վերաբերյալ պատկերացումներ, զարգացնել մանկավարժական մտածողությունը և մշակույթը, նպաստել մանկավարժության հիմնական հասկացությունների յուրացմանը, ձևավորել մանկավարժական երևույթները նկարագրելու, մեկնաբանելու հմտությունները: | | | | | | |
| Հ/Հ | Մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները | Լսարանային ժամաքանակը | Այդ թվում | | Մոդուլի բովանդակությունը | |
| | | | Տեսական պարապմունքների ժամերը | Գործնական պարապմունքների ժամերը | Թեմաներ (տեսական, գործնական) | Ինքնուրույն աշխատանքներ |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | **Մոդուլի ավարտին Ունկնդիրը կիմանա՝**<br>- կրթության զարգացումների հիմնական համաշխարհային միտումները<br>- ՀՀ կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները,<br>- չափորոշչային պահանջները,<br>- ուսուցման և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաները,<br>- անձի սոցիալականացման էությունը,<br>- սոցիալականացման վրա ազդող գործոնները<br>- սոցիալ-մանկավարժական ծառայության դերը հանրակրթական | 10 | 5 | 5 | **Թեմա 1.**<br>Մանկավարժության արդի խնդիրները և կրթության զարգացումների հիմնական համաշխարհային միտումները:<br>**Ենթաթեմաներ՝**<br>1.1. Կրթության ժամանակակից հայեցակարգեր:<br>1.2 Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Անձնային-ուղղորդված կրթությունը և դրա իրականացման պայմանները:<br>Ուսուցման մեթոդների էությունն ու բովանդակությունը:<br>Մեթոդի տեղն ու դերը կրթական տեխնոլոգիայում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Մտքերի քարտեզագրում, խմբային աշխատանք, աշխատանք զույգերով:<br><br>**Թեմա 2.**<br>ՀՀ կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները (ՀՊՁ):<br>**Ենթաթեմաներ՝**<br>2.1 ՀՀ կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները:<br>2.2 Չափորոշչահեն կրթություն:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Չափորոշչահեն առարկայական ծրագրեր: | 1. Մշակել և ներկայացնել ՀՀ կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծություն:<br>2. Համեմատել ժողովրդավարության մշակույթի ձևավորման կարողունակությունների արժեքներ և վերաբերմունք բաղադրիչների զարգացմամբ առարկայական դասերի մոդելներն այլ դասերի մոդելների հետ և ներկայացնել վերլուծության արդյունքները: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | դպրոցում,<br>- ժողովրդավարության մշակույթի ձևավորման կարողունակություններ,<br>- դասարանավարության բաղադրիչները և արժեքները,<br>- արժեքների և վերաբերմունքի ձևավորման պահանջները կրթական չափորոշիչներում:<br><br>**Կկարողանա՝**<br>- կյանքի մշտապես փափոխվող պայմաններում կրթության մեջ ծագած մարտահրավերները լուծել,<br>- կիրառել ուսուցման տեխնոլոգիաները, ախտորոշել և կանխատեսել | | | | Կոնկրետ օրինակների միջոցով նպատակին համապատասխան չափելի, ճշգրիտ վերջնարդյունքների ձևակերպում, վերջնարդյունքներին հասնելու համապատասխան մեթոդների (հաշվի առնելով մեթոդի ուժեղ և թույլ կողմերը) ընտրություն:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Մտքերի քարտեզագրում, Վենի դիագրամ, խմբային աշխատանք, աշխատանք զույգերով:<br><br>**Թեմա 3.**<br>Անձի սոցիալականացման հիմնախնդիրները:<br>**Ենթաթեմաներ՝**<br>3.1 Անձի սոցիալականացման էությունը<br>3.2 Սոցիալականացման վրա ազդող գործոնները<br>3.3 Սոցիալ-մանկավարժական ծառայության դերը հանրակրթական դպրոցում<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Սոցիալական դերերի բաշխում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Մտքերի քարտեզագրում, խմբային աշխատանք, աշխատանք զույգերով:<br><br>**Թեմա 4.**<br>Արժեքների և վերաբերմունքի ձևավորումը առարկայական դասաժամերին:<br>**Ենթաթեմաներ՝** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տեխնոլոգիական ցիկլը։<br>- ուսուցման գործընթացը տեխնոլոգիական մոտեցմամբ նախագծել և իրականացնել<br>- համեմատել գործող չափորոշչով սահմանված միջնակարգ դպրոցի շրջանավարտին ներկայացվող ընդհանրական պահանջները և նոր չափորոշչով սահմանված հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառությանն ակնկալվող վերջնարդյունքներ | | | | 4.1 Ժողովրդավարության մշակույթի ձևավորման կարողունակություններ։<br>4.2 Դասարանավարություն. բաղադրիչներ և արժեքներ<br>4.3 Արժեքների և վերաբերմունքի ձևավորման պահանջները կրթական չափորոշիչներում։<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Քննարկում սեփական քաղաքացիական դիրքորոշման հիմնավորման վերաբերյալ։<br>Տեսական նյութի հիման վրա խմբային աշխատանքի կազմակերպում ՝ ժողովրդավարության չափանիշները ուսումնասիրելու նպատակով. ներկայացնել ինքնուրույն-որոնողական կամ նախընտրած այլ աշխատանքի տեսքով։<br>Ինքնագնահատում «Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների բնութագրիչների» հիման վրա։<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Մտքերի քարտեզագրում, Վենի դիագրամ, խմբային աշխատանք, աշխատանք զույգերով։ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ը,<br>- կատարել սոցիալական դերերի բաշխում:<br>- քննարկել և հիմնավորել սեփական քաղաքացիական դիրքորոշումը,<br>- տեսական նյութի հիման վրա խմբային աշխատանք կազմակերպել՝ ժողովրդավարության չափանիշները ուսումնասիրելու նպատակով,<br>- կատարել ինքնագնահատում «Ժողովրդավարական մշակույթի կարողունակություննների բնութագրիչների» հիման վրա: | | | | | |

**Գնահատում**

Գնահատման ձևը՝ թեմատիկ ստուգման թեստ:

Թեստավորման յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

| | |
|---|---|
| Թեստավորման փուլը հաղթահարված է համարվում թեստավորման առաջադրանքների առնվազն 60 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում: | |
| **Օգտագործված գրականության ցանկ Էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ** | 1. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթական բարեփոխումների համատեքստում, «Բարև» հասարակական կազմակերպություն, 2013թ.,<br>2. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf, 19.03.2014թ.:<br>3. Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ», «Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ», 2020թ.:<br>4. Խաչատրյան Ս., «Կամուրջներ պատերի փոխարեն», «Անտարես», 2014թ:<br>5. Հանրակրթության պետական չափորոշիչ (գործող), https://e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/07/11_1088.pdf:<br>6. Հանրակրթության պետական կրթակարգի մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829#:<br>7. Հանրակրթության պետական չափորոշիչ (նոր), https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788:<br>8. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Համատեքստ, հասկացություններ և մոդել, հատոր 1, Եվրոպայի խորհուրդ, ARM Reference Framework Vol 1.pdf, https://rm.coe.int/prems-000821-arm-2510-reference-framework-vol-1-couv-texte-16x24-web/1680a1b757:<br>9. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758:<br>10. Պետրոսյան Հ.Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ.: |

| **Մոդուլի անվանում** | **Կրեդիտ** |
|---|---|
| 4. Տարիքային և մանկավարժական հոգեբանության հիմունքներ | 1 |
| **Նպատակը** | |
| Մոդուլի նպատակն է ունկնդիրներին ներկայացնել գիտելիքներ դպրոցականների իմացական գործընթացների հոգեբանական | |

| առանձնահատկությունների վերաբերյալ, զարգացնել հմտությունների ուսուցման, հոգեբանամանկավարժական իրավիճակների ներկայացման և վերլուծելու կարողությունները: | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները | Լսարանային ժամաքանակը | Այդ թվում | | Մոդուլի բովանդակությունը | |
| | | | Տեսական պարապմունքների ժամերը | Գործնական պարապմունքների ժամերը | Թեմաներ (տեսական, գործնական) | Ինքնուրույն աշխատանքներ |
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
| 4 | **Մոդուլի ավարտին Ունկնդիրը կիմանա՝**<br>- սովորողների հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում,<br>- հմտությունների ուսուցման հոգեբանական միջոցները,<br>- հոգեբանամանկավարժական վերլուծություններ իրականցնելու ուղիները: | 10 | 5 | 5 | **Թեմա 1.**<br>Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում:<br>**Ենթաթեմաներ՝**<br>1.1.Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկություններն ու դինամիկան կրտսեր դպրոցական տարիքում:<br>1.2.Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկություններն ու դինամիկան միջին դպրոցական տարիքում:<br>1.3.Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկություններն ու դինամիկան ավագ դպրոցական տարիքում:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Սովորողների զարգացման տարիքային շրջանների հոգեբանական բնութագրերի կազմում՝ | *1. «Կրտսեր դպրոցականների իմացական պրոցեսների զարգացումը» թեմայով իրավիճակի ներկայացում*<br>*2. Կազմել դասի պլան՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Ունկնդիրը կկարողանա՝**<br>- բնութագրել սովորողների հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում և այդ առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացնել արդյունավետ դասավանդում,<br>- կիրառել հմտությունների ուսուցման տարբեր հոգեբանական միջոցներ,<br>- իրականացնել տարբեր իրավիճակների հոգեբանամանկավարժական վերլուծություն: | | | | աղյուսակների տեսքով:<br>Տարիքային շրջանների համեմատական վերլուծություն:<br>Հոգեկան գործընթացների և նրանց առանձնահատկություններին համապատասխան դասավանդման մոտեցումների խմբային մշակում և ներկայացում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Վենի դիագրամ, T-աձև աղյուսակ:<br><br>**Թեմա 2.**<br>Հմտությունների ուսուցում, հոգեբանամանկավարժական իրավիճակների ներկայացում և վերլուծություն:<br>**Ենթաթեմաներ՝**<br>2.1.Հմտությունների ուսուցման հոգեբանական միջոցները:<br>2.2.Հոգեբանամանկավարժական վերլուծություններ իրականացնելու ուղիները:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Հմտությունների ուսուցման հոգեբանական միջոցների բացահայտման ուղիներ և մեթոդներ:<br>Հոգեբանամանկավարժական իրավիճակների ներկայացում և վերլուծում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Գաղափարների քարտեզագրում, խմբային աշխատանք: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| Գնահատում |
|---|
| Գնահատման ձևը՝ թեմատիկ ստուգման թեստ:<br>Թեստավորման յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Թեստավորման փուլը հաղթահարված է համարվում թեստավորման առաջադրանքների առնվազն 60 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում: |

| **Օգտագործված գրականության ցանկ Էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ** | 1. Кулагина И. Ю Возрастная психология. М. 1998<br>2. Лефрансуа Ги Прикладная педагогическая психология, изд. Прайм-Еврознак, 2007<br>3. Обухова, Л.Ф. Возрастная психология: Учебник для бакалавров. М.: Юрайт, 2013<br>4. Регуш Л. А., Орлова А. В. Педагогическая психология. Учебное пособие. Стандарт третьего поколения. 2-е изд. дополненное. Изд-во ,,Питер", 2020, 496 с. |
|---|---|

| **Մոդուլի անվանում** | **Կրեդիտ** |
|---|---|
| 5. Ներառական կրթություն | 1 |

| **Նպատակը** |
|---|
| Մոդուլի նպատակն է ծանոթացնել ՀՀ հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար իրականացվող կրթության քաղաքականության հիմնական մոտեցումները, ձևավորել ԱՈՒՊ-ի մշակման, պլանավորման և կազմման հմտությունները: |

| Հ/Հ | Մոդուլի ուսումնառության վերջնարդյունքները | Լսարանային ժամաքանակը | Այդ թվում | | Մոդուլի բովանդակությունը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական պարապմունքնե րի ժամերը | Գործնական պարապմունքնե | Թեմաներ (տեսական, գործնական) | Ինքնուրույն աշխատանքներ |

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | **Մոդուլի ավարտին Ունկնդիրը կիմանա՝**<br>- ներառական կրթության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները,<br>- ներառական կրթության դրական կողմերը և հիմնական սկզբունքները,<br>- ներառական կրթության համատեքստում հաճախ հանդիպող բազմազանության տեսակները,<br>- ՀՀ-ում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման եռաստիճան համակարգը, | 10 | 5 | 5 | **Թեմա 1.**<br>Ներառական կրթության փաստահենք ընկալում:Ներառական կրթության իրավական կարգավորումներ:<br>**Ենթաթեմաներ՝**<br>1.1.Ներառական կրթության գաղափարախոսությունը:<br>1.2. Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության իրականացման հիմնական օրենսդրական հիմքերը, սկզբունքները:<br>**Թեմա 2.**<br>Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ դպրոցական, տարածքային, հանրապետական մակարդակներում:<br>**Ենթաթեմաներ՝**<br>2.1. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը:<br>2.2 Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման մակարդակների առանձնահատկությունները:<br>2.3.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշները՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի աստիճանի:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Դպրոցական մակարդակի գնահատման գործիքի | 1. ԱՈՒՊ-ի կազմում՝ ըստ առարկայական ծրագրերի և չափորոշիչների:<br>2. Դասի պլանի կազմում՝ օգտվելով ԱՈւՊ-ի նպատակներից: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | - Երեխային, ծնողին, մանկավարժին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակները,<br>- Համատեղ դասավանդման մոդելները, բաղադրիչները, ինչպես նաև ներկայացնել արդյունավետ համատեղ դասավանդման քայլերը,<br>- Անհատական ուսուցման պլան հասկացությունը,<br>- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար | | | | կիրառում:<br>Կիրառված գործիքի հիման վրա մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման պլանավորում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Զույգերով աշխատանք:<br><br>**Թեմա3.**<br>Կրթական ծրագրերի հարմարեցումներ, տարբերակված ուսուցում, անհատական ուսուցման պլանավորում:<br>**Ենթաթեմաներ՝**<br>3.1. Ինչ է անհատական ուսուցման պլանը / ԱՈՒՊ/:<br>3.2.ԱՈՒՊ-ի մշակման գործընթացը՝ ըստ փուլերի:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>Անհատական ուսուցման պլանի թիմի անդամների գործառույթներն ու պարտականությունները:<br>Թիմի անդամների պարտականությունների խմբային մշակում և ներկայացում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Աշխատանք խմբերով:<br><br>**Թեմա 4**.<br>Ներառող դասավանդում, ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ:<br>**Ենթաթեմաներ՝**<br>4.1.Տարբեր ֆունկցիաների խանգարումներ ունեցող | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անհրաժեշտ հարմարեցումները,<br>- Սովորողի ԱՈՒՊ-ի մշակման գործընթացի հիմնական քայլերը,<br>- Երեխայի անհատական կրթական նպատակները,<br>- Կրթության գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնակիցների համագործակցության շրջանակը,<br>- Ուսուցիչների, աջակցող մասնագետների, ընտանիքների անդամների ու երեխայի կրթության հետ առնչվող այլ շահառուների հետ՝ երեխաների արդյունավետ ուսումնառության | | | | երեխաների զարգացման առանձնահատկություններն ու նախազգուշացնող ազդակները:<br>4.2.Սովորողների ներառումը դասարանում խթանելու արդյունավետ ռազմավարություններ:<br>**Գործնական աշխատանքների թեմանները՝**<br>Ինչպես ապահովել տարբեր ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների կրթության մատչելիությունն ու հասանելիությունը:<br>Ըստ ֆունկցիաների խանգարման տեսակների համապատասխան ռազմավարությունների քարտեզագրում և ներկայացում:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Աշխատանք խմբերով:<br><br>**Թեմա 5.**<br>Համագործակցություն և փոխհարաբերություններ ներառական կրթության համատեքստում:<br>**Գործնական աշխատանքների թեմանները՝**<br>Համագործակցությունը որպես երեխայի կարողունակությունների զարգացման, կրթական գործընթացի բարելավման գրավական:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Մտագրոհ, հարց ու պատասխան: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խոչընդոտները հաղթահարելու համագործակցության ուղիները:<br>**Ունկնդիրը կկարողանա՝**<br>- Մեկնաբանել ներառական կրթության կարևորությունը մարդու իրավունքների տեսանկյունից,<br>- ներկայացնել ներառական կրթության համատեքստում ընդունելի բառապաշարը,<br>- ընդունել և արժևորել սովորողների բազմազանությունը,<br>- համարել սովորողների տարբերությունը որպես ռեսուրս և արժեք,<br>- ճանաչել հաճախ հանդիպող | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կրթական կարիքների առանձնահատկությունները,<br>- բացահայտել և ճանաչել սովորողների կրթական կարիքները,<br>- վերհանել կրթության գործընթացում երեխայի լիարժեք մասնակցության սահմանափակումները և դրանց հաղթահարմանը խթանող գործոնները,<br>- կիրառել դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմը,<br>- տարբերակել դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում կրթության կազմակերպման | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացները,<br>- ընտրել ու կիրառել դասավանդման համապատասխան մեթոդներ և ռազմավարություններ՝ ելնելով սովորողների կրթական կարիքներից ու առանձնահատկություններից,<br>- կիրառել դասավանդման և ուսումնառության համընդհանուր ձևավորման մոտեցումները,<br>- կիրառել սովորողների ներգրավման բազմազանության ձևեր,<br>- պլանավորել դասն այնպես, որ բոլոր սովորողները դասի | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարբեր փուլերում մասնակցություն ունենան,<br>- իրականացնել համատեղ դասավանդում,<br>- կատարել հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներ ըստ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի,<br>- մեկնաբանել ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցությ ան կարևորությունը,<br>- ներկայացնել ընտանիքին երեխայի ուսումնառության հարցերում ակտիվ ներգրավելու ռազմավարություններ: | | | | | |

| **Գնահատում** | |
|---|---|
| Գնահատման ձևը՝ թեմատիկ ստուգման թեստ:<br>Թեստավորման յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Թեստավորման փուլը հաղթահարված է համարվում թեստավորման առաջադրանքների առնվազն 60 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում: | |
| | | | | | 4.3.Ինտեգրման հնարավորությունները հիմնական և ավագ դպրոցներում անգլերենի դասաժամերին:<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>• Ծանոթանալ անգլերեն – հայոց լեզու միջառարկայական որևէ նախագծի հետ<br>• Կազմել ինտեգրված դասի մեկ նախագիծ, այն իրականացնել սովորողների հետ, ընթացքը և արդյունքները վերլուծել<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Աշխատանք խմբերով: Ցուցադրություններ: Մտագրոհ:<br><br>**Թեմա 5**. ՏՀՏ օգտագործումը անգլերենի դասավանդման դասարանային և արտադասարանական պարապմունքների ժամանակ:<br>**Ենթաթեմաներ՝**<br>5.1. ՏՀՏ-ի դերը և նշանակությունը «Անգլերեն» առարկայի դասավանդման ընթացքում<br>5.2. ՏՀՏ-ի օգտագործման հիմնական առանձնահատկությունները «Անգլերեն» առարկայի դասարանային և արտադասարանական պարապմունքների ժամանակ<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>5.1.Համակարգչային ծրագրերի, առցանց գործիքների և ռեսուրսների օգտագործումը անգլերեն առարկայի դասերին: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 5.2.Էլեկտրոնային ուսումնական նյութերի ստեղծման վերաբերյալ որոշ նկատառումներ (օրինակների դիտարկում): **Գործնական աշխատանքների տեսակները՝** Խմբային աշխատանք, անհատական աշխատանք: <br><br> **Թեմա 6**. Անգլերենի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը: **Ենթաթեմաներ՝** <br>6.1. Սովորողների արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները «Անգլերեն» առարկայի ուսուցման գործընթացում <br>6.2 Արժեհամակարգի ձևավորման բաղադրիչի ներմուծումը դասի պլանում <br>6.3. «Արժեք, արժեքների համակարգ» ինտերակտիվ դաս-վարժություն <br>**Գործնական աշխատանքների թեմաները՝** <br>• Արժեհամակարգի ձևովորման գործողությունների պլանի մշակում <br>• «Անգլերեն» առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորման ինտերակտիվ դաս-վարժության օրինակի պատրաստում <br>**Գործնական աշխատանքների տեսակները՝** <br>‹‹Մտածիր-քննարկիր-կիսվիր›› մեթոդ, անհատական աշխատանք: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **Թեմա 7**. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը<br>**Ենթաթեմաներ՝**<br>7.1. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառման առանձնահատկությունները «Անգլերեն» առարկայի դասերին<br>7.2. Ստեղծագործական մտածողությունը զարգացնող մեթոդներ և մեթոդական հնարներ<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>• Սովորողների ճանաչողական հմտությունները, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների մշակում<br>• Ստեղծագործական մտածողությունը զարգացնող մեթոդներով դասի օրինակի մշակում<br>• Առանձնացնել ձեր կարծիքով ծրագրային բարդ որևէ թեմա, վերլուծել այն, ցույց տալ բարդությունները և պատրաստել հաղորդում ուսուցման գործընթացում դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «Ապագայի անիվ», «Մոդերացիա (635 մեթոդ)», «Ուոլթ Դիսնեյի մտավոր աթոռները» մեթոդները, խմբային աշխատանք, անհատական աշխատանք:<br><br>**Թեմա 8**. Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը:<br>**Ենթաթեմաներ՝**<br>8.1. Գնահատում: Միավորային գնահատում: Նպատակը, տեսակները<br>8.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները<br>8.3. Ձևավորող գնահատում: Տեսակները և ձևերը<br>8.4 Հայտորոշիչ թեստի կազմում<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>• Ձևավորող գնահատման նպատակով հետադարձ կապի, ինքնագնահատման կամ փոխադարձ գնահատման ներկայացում (նշվածներից որևէ մեկի վերաբերյալ):<br>• Սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման առաջադրանքների, թեստերի մշակում՝ հաշվի առնելով առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջները<br>• Հայտորոշիչ թեստի կազմում<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>«Խճանկար», աշխատանք զույգերով: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **Թեմա 9**. Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները անգլերենի համատեքստում:<br>**Ենթաթեմաներ՝**<br>9.1.Օտար լեզվի դասավանդման ժամանակակից դիդակտիկ մոտեցումները<br>9.2.Ուսուցման գործընթացում սովորողի կողմից կարևորվող անգլերեն լեզվի ուսուցման տարբեր ռազմավարություններ<br>**Գործնական աշխատանքների թեմաները՝**<br>1. Վերլուծել դասը նախնական, միջին, ավարտական փուլերում,<br>2. Կազմել դասի պլան-կոնսպեկտ՝ ըստ ուսումնական նյութի բնույթի և ակնկալվող վերջնարդյունքների,<br>3. Ներկայացնել դաս վարելու պահանջները:<br>**Գործնական աշխատանքների տեսակները՝**<br>Քուիզ թեմայի շրջանակում, քերականական նյութի և բառապաշարի ուսուցման նպատակով առաջադրանքների մշակում/բառային ամպ, խաչբառեր, խաղեր, կետերի փոխարեն լրացնել, գրավոր տեքստերի բարձրաձայն ընթերցում, բանավոր պատասխաններ վարժության հարցերին, ճիշտ-սխալ տարբերակի նշում, թելադրություն և այլն: | |
| **Գնահատում** | | | | | | |
| Գնահատման ձևը՝ ամփոփիչ պորտֆոլիո, որը կազմված է յուրաքանչյուր թեմայի մեկ գործնական առաջադրանքից և մեկ | | | | | | |

| | |
|---|---|
| ինքնուրույն աշխատանքից:<br>Առաջադրանքները գնահատվում են ըստ նախապես կազմված ռուբրիկի: Առաջադրանքների գնահատումն ամփոփվում է ըստ բառային նկարագրիչի՝ ստուգված կամ չստուգված:<br>Գնահատման չափանիշներն են՝<br>Դասի նպատակի և վերջնարդյունքների ձևակերպում ըստ Բլում-Անդերսոնի տաքսոնոմիայի և թիրախային բառապաշարի:<br>Դասի նպատակին և առարկայի առանձնահատկություններին համապատասխան մեթոդների ընտրություն,<br>Աշակերտների ներգրավման մեթոդների և ձևերի բազմազանություն,<br>Աշակերտների գնահատման ձևերի և մեթոդների բազմազանություն: | |
| **Օգտագործված գրականության ցանկ**<br>**Էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ** | 1. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն)<br>2. Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն)<br>3. «Օտար լեզուներ» առարկայախմբի չափորոշիչ և ծրագիր, 2020:<br>4. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ 2020թ:<br>5. Օտար լեզուների պետական չափորոշիչ և ծրագիր 2020թ.:<br>6. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:<br>7. Հանրակրթական դպրոցում օտար լեզուների դասավանդման ուսուցչի մեթոդական ձեռնարկներ:<br>8. Նավասարդյան Ս., Քեռյան Լ., Օտար լեզվի դասավանդման ակտիվ մեթոդները, 2016:<br>9. Nagaraj G. English Language Teaching: Aproaches, Methods, Techniques. India: Orient Blackswan, 1996.<br>10. Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ,Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:<br>11. Առանց պատմելու դասավանդման 25 եղանակ, Ձ. Կարաբեկյան, ԳիտՍերունդ:<br>12. Լ. Ստեյնհաուզ, «Ուսուցիչը որպես հետազոտող», Արարատյան Բակալավրիատ, ԱՅԲ |

| | |
|---|---|
| | ԿՀ:<br>13. Օ.Ս. Միքայելյան, Ս.Օ.Միքայելյան, «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ուսուցչի ձեռնարկ: Երևան 2010:<br>14. https://docs.google.com/document/d/1ZNgUzcvwh9hAZjs7Rl7dxLb8GQpDfsCOixPXAVi9-ws/edit?usp=sharing<br>15. https://docs.google.com/document/d/1QLwoUgJ7EuLT5kemLecoS5CmWld3lFysixnbWx0gxuE/edit?usp=sharing |

| **Բաղադրիչի անվանում** | **Կրեդիտ** |
|---|---|
| 10. Մասնագիտական պրակտիկա | 4 |
| **Նպատակը** | |
| Պրակտիկայի նպատակն է ունկնդրին հնարավորություն տալ գործնականում կիրառել ձևավորված կարողունակությունները՝ ուսուցման և ուսումնառության վերաբերյալ և իրականացնել նախագծային ուսումնառություն: | |
| Վերջնարդյունքները | |
| **Պրակտիկայի ավարտին ունկնդիրը կկարողանա՝**<br>- Կազմել չափորոշչահեն դասի պլաններ, որոնք կնպաստեն սովորողների արդյունավետ ուսումնառությանն ու զարգացմանը, որում պլանավորված կլինեն յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը և ներգրավվածությունը,<br>- Դասի վարման ընթացքում կիրառել դասավանդման ինտերակտիվ և նորարական մեթոդներ,<br>- Իրականացնել նախագծային ուսուցում աշակերտների հետ,<br>- Ուղղորդել աշակերտներին ներկայացնելու պրակտիկայի ընթացքում ստեղծված նախագիծը,<br>- Իրականացնել դասալսումներ,<br>- Վերլուծել դասի ընթացքը և ներկայացնել դասալսման վերլուծության արդյունքները: | |
| **Իրականացման ձևը** | |

| |
|---|
| **Մասնագիտական պրակտիկայի** տևողությունը կազմում է 3 շաբաթ և կազմակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում: Յուրաքանչյուր խմբի հետ պրակտիկայի ողջ ընթացքում աշխատում է համապատասխան մասնագետ: Յուրաքանչյուր շաբաթ ուսնկնդիրները նախապես պատրաստում են համապատասխան դասի պլաններ և այլ ռեսուրսներ: Վարում են դասեր անմիջական կցված դասարաններում (առնվազն 3): Պարտադիր է ուսումնական մեկ նախագծի ղեկավարումը: Կատարվում են վերլուծություններ: |
| **Գնահատում** |
| Ամփոփիչ գնահատումն իրականացվում է դիտարկման միջոցով (կցվում է դասալսման ձևաթղթի ակտիվ հղումը) և նախապես մշակված ռուբրիկի կիրառմամբ (գնահատման չափանիշները ներկայացված են ստորև): Գնահատման համար ունկնդիրը ներկայացնում է պրակտիկայի օրագիր, հաշվետվություն պրակտիկայի անցկացման մասին, դասավարման և դասալսման հաստատված ձևաթղթեր: Պրակտիկայի գնահատումն ամփոփվում է ըստ բառային նկարագրիչի՝ պրակտիկան անցած (գերազանց/լավ/բավարար) կամ պրակտիկան չանցած (անբավարար):<br>Գնահատման չափանիշներն են՝<br>Դասի համապատասխանությունը նախապես պատրաստած պլանին,<br>Դասի նպատակների և վերջնարդյունքների սահմանում և ներկայացում աշակերտներին,<br>Դասի տարբեր փուլերի առկայություն (դասի սկիզբ, նոր նյութի ներկայացում, գործնական աշխատանք, գնահատում, ամփոփում)<br>Դասի տարբեր փուլերի ժամանակ համապատասխան ակտիվ և փոխներգործուն մեթոդների կիրառություն,<br>Դասի ընթացքի համապատասխանություն առաջադրված նպատակներին և վերջնարդյունքներին,<br>Նյութի ներկայացման ձևերի և մեթոդների բազմազանություն,<br>Դասի ընթացքում թվային գործիքների կիրառություն: |

| **Բաղադրիչի անվանում** | **Կրեդիտ** |
|---|---|
| 11. Ավարտական հետազոտական աշխատանք | 3 |
| **Նպատակը** | |
| «Ավարտական հետազոտական աշխատանք» բաղադրիչի ներառումը նպատակ ունի զարգացնել ունկնդրի ակադեմիական և մանկավարժական կարողունակությունները, խթանել նրա քննադատական և ստեղծագործական հմտությունները և ուղղված է | |

ուսուցչի աշխատանքում հանդիպող կոնկրետ ուսումնական, մանկավարժական խնդրի լուծմանը:

**Վերջնարդյունքները**

**Ավարտական հետազոտական աշխատանքի կատարման արդյունքում ունկնդիրը կկարողանա՝**

- կատարել կրթական հետազոտություններ,
- հանդես գալ մանկավարժական գործունեության նոր մոտեցումների մշակման և ներդրման առաջարկություններով:

**Բովանդակությանը ներկայացվող պահանջները**

Հետազոտական աշխատանքը շարադրվում է տպագիր, որի ծավալը կարող է տատանվել 15-20 էջի սահմաններում, տառատեսակը՝ Sylfine, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ: Այն ունի հետևյալ կառուցվածքը՝

ա/ Տիտղոսաթերթ

բ/ Բովանդակություն

գ/ Ներածություն, որում պետք է հիմնավորվի ընտրված թեմայի կարևորությունը, հստակ ձևակերպվի աշխատանքի նպատակը: Տեքստը շարադրելիս անհրաժեշտ է հղում կատարել աղբյուրներին, որոնցից փոխառնվել են օգտագործված նյութերը:

դ/ Պարագրաֆներ/մասեր

ե/ Եզրակացություններ, առաջարկություններ

զ/ Օգտագործված գրականության ցանկ

**Գնահատում**

Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են գերազանց, լավ, բավարար, անբավարար գնահատականներով՝ ԳՊՀ-ում ընդունված գնահատման 100 միավորանոց համակարգով: Աշխատանքի գիտական ղեկավարը գնահատում է ներկայացված աշխաատանքի համապատասխանությունը ըստ ստորև բերված չափանիշների, ինչը հիմք է հանդիսանում վերջնական գնահատականի ձևավորման համար:

Գնահատման չափանիշներ / առավելագույն միավոր՝

- Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը / առավելագույնը՝ 10 միավոր
- Աշխատանքի կատարումը և արդյունքները / առավելագույնը՝ 30 միավոր,
- Աշխատանքի շարադրումը և ձևավորումը / առավելագույնը՝ 20 միավոր,
- Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը / առավելագույնը՝ 40 միավոր

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 1

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**

1. **Դասի թեման**

հիմնական հարցերը.

2. **Դասի նպատակը**

3. **Դասի խնդիրները**

ա. Կրթական (ակադեմիական)

- գիտելիք
- հմտություն

բ. Դաստիարակչական

- արժեքներ
- վերաբերմունք

գ. Զարգացման

- մտածողություն
- երևակայություն
- հիշողություն և ուշադրություն
- կամք, կամային որակներ
- զգացումներ, հույզեր, ապրումներ

4. **Ուսուցման միջոցները (ուսումնադիտողական պարագաներ)**

ա. դասագիրք
բ. ուսումնական նյութեր
գ. զննական

- պատկերային-զննական
- պայմանական-գրաֆիկական
- անհատական-բաշխիչ քարտեր

5. **Ներառարկայական և միջառարկայական կապեր**

6. **Դասատիպեր**

7. **Ուսուցման մեթոդներ, հնարներ**

8. **Դասի փուլերը և ընթացքը**

***ա.*** *Կազմակերպչական աշխատանքներ*

- սովորողների հաշվառում
- դասարանի աշխատանքային վիճակի բերում
- աշխատատեղերի նախապատրաստում
- ուսումնական մթնոլորտի ստեղծում

***բ.*** *Անցած նյութի հարցում և վերջնարդյունքների պարզում*
- տնային հանձնարարությունների քննարկում հետադարձ կապի միջոցով
- հենակետային գիտելիքների արդիականացում (ակտիվացում, հայտորոշում)

***գ.*** *Անցում նոր նյութի ուսումնասիրման*
- թեմային նպատակի և խնդիրների հստակեցում
- թեմայի վերաբերյալ հենակետային արդիականացում (ակտիվացնում, վերականգնում
- նոր նյութի խթանում և մոտիվացիայի (շարժառիթների) ստեղծում
- անցած և նոր նյութերի միջև կապի ապահովում

***դ.*** *Նոր նյութի ընկալում և ըմբռնում*
- նոր նյութի բովանդակության ամբողջական պատկերի ստեղծում
- նոր ուսումնական նյութի ընթերցում (պատմում, հաղորդում, քննարկում և այլն)
- աշխատանք դասագրքի տեքստի և այլ ուսումնական նյութերի վրա
- նոր նյութի ըմբռնում և գիտակցում (նյութի մեջ օբյեկտիվ կապերի և հարաբերությունների հայտնաբերում)

***ե.*** *Նոր նյութի ամրապնդում և իմաստավորում*
- տեքստի վերարտադրություն
- մարզողական և բացատրական վարժություններ
- նոր նյութի վերլուծություն, համադրություն, համեմատություն, ներառարակայական և միջառարկայական կապերի և հարաբերությունների բացահայտում, ընդհանրացում և այլն

**զ.** *Նոր նյութի յուրացում*
- գիտելիքների կիրառում և ընդհանրացում
- նյութի վերաշարադրում սեփական բառերով
- գիտելիքների կիրառումը ծանոթ իրավիճակում
- գիտելիքների կիրառումը անծանոթ իրավիճակներում

**է.** *Կշռադատում, գնահատում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում*

**ը.** *Ամփոփում և անդրադարձ*

**թ.** *Տնային հանձնարարություն (միտված վերջարդյունքներին)*
- տարբերակված առաջադրանքներ
- վերարտադրական, որոնողական, ստեղծագործական առաջադրանքներ

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 2

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**

**Քայլ 1.**
**Ընտրել թեման՝** ----------------------------

**Քայլ 2. Հրահանգներ տալուց առաջ հստակեցնել նպատակները և միջոցները**
Ակադեմիական նպատակները՝ ____________________________

Կարողունակությունների
զարգացման նպատակները՝ ______________________________
Անհրաժեշտ պարագաները՝ ______________________________
Սենյակի կահավորումը՝ ______________________________
Խմբի չափը՝ ______________________________
Խմբի կառուցվածքը՝ ______________________________
Դերերը խմբում՝ ______________________________

**Քայլ 3. Բացատրել առաջադրանքը և համագործակցության նպատակը**
1. Առաջադրանքը՝ ______________________________
2. Հաջողության չափանիշներ՝ ______________________________
3. Դրական փոխկախվածություն՝ ______________________________
4. Անհատական հաշվետվություն՝ ______________________________
5. Ներխմբային
համագործակցություն՝ ______________________________
6. Առանձնահատուկ վարքագծեր՝ ______________________________

**Քայլ 4. Վերահսկում և միջամտում**
1. Ընթացակարգի վերահսկում՝ ______________________________
2. Վերահսկում ուսուցչի կողմից՝ ______________ Աշակերտի կողմից՝ ____________
3. Միջամտություն առաջադրանքի կատարմանն աջակցելու համար__________
4. Միջամտություն թիմին աջակցելու համար՝ ______________________________
5. Այլ՝ ______________________________

**Քայլ 5. Խմբային գործընթացի գնահատում և մշակումներ**
1. Խմբի անդամների անհատական ուսումնառության գնահատում՝ ____________
2. Խմբային արդյունավետության գնահատում՝ ______________________________
3. Փոքր խմբային գործընթաց/մշակումներ______________________________
4. Դասարանային մշակումներ՝ ______________________________
5. Գծապատկերների գործածում՝ ______________________________
6. Դրական հետադարձ կապ յուրաքանչյուր աշակերտին՝ ______________________________
7. Բարելավման նպատակներ՝ ______________________________
8. Հաջողության տոնումը՝ ______________________________
9. Այլ՝ ______________________________

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 3

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**
**Թեմա**
**Դասի նպատակը (ները)՝**
- Կրթական
- Դաստիարակչական

- Զարգացնող

**Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ՝**

- Դասը համապատասխանո՞ւմ է արդյոք ծրագրին, դասի նպատակներին և խնդիրներին:
- Դասի բովանդակության գիտական, տրամաբանական և հասանելի լինելու աստիճանը:
- Ո՞ր նյութի հետ են սովորողներն առաջին անգամ աշխատում և ինչպիսի՞ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կձևավորվեն և կամրապնդվեն դասի ժամանակ:
- Ինչպե՞ս դասի նյութը կազդի սովորողների ստեղծարարության և հմտությունների վրա:
- Ի՞նչ միջառարկայական կապեր է իրականացնում դասը:
- Նպաստե՞ց արդյոք դասը ուսումնառության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը:

**Դասի տիպը և կառուցվածքը**

- Ինչպիսի՞ դասի տիպ է ընտրված
- Դասի տեղը տվյալ թեմայի դասերի համակարգում
- Ինչպիսի՞ կապ կար նախորդ դասերի հետ
- Որո՞նք են դասի փուլերը, դրանց հաջորդականությունը և տրամաբանական կապը

**Դասի մեթոդները**

- Որքանո՞վ դասի ընթացքում կիրառված մեթոդները կհամապատասխանեն դասի խնդիրներին:
- Ո՞ր մեթեդները կնպաստեն սովորողների ուսումնառության ակտիվացմանը:
- Ինչպիսի՞ն կլինի կիրառված մեթոդների և դասավանդման հնարքների արդյունավետությունը:

**Դասի ընթացքը**

- Դասի յուրաքանչյուր փուլում ուսումնական խնդիրների իրականացումը:
- Դասի տարբեր ձևերի՝ անհատական, խմբային և դասարանական համադրությունը:
- Հերթագայվում էին արդյո՞ք ուսումնական տարաբնույթ գործընթացները (մեկ դասի ընթացքում սահմանային քանակը 4-7 տեսակն է՝ յուրաքանչյուրի միջին տևողությունը 5-ից 10 րոպե): Օրինակ՝ սովորողների հարցում, նամակ, ընթերցում, ունկնդրում, տեսանելի ուսումնական նյութերի դիտում, հարցերի պատասխաններ և այլն:
- Սովորողների գործունեության վերահսկողության կազմակերպման ձևը:
- Սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման ձևը:
- Ինչպե՞ս իրականացվեց սովորողների զարգացումը (տրամաբանական մտածողության զարգացումը, մտքերի քննադատականությունը, համեմատելու կարողությունը, եզրահանգումներ անելու կարողությունը):
- Դասի և դասի առանձին փուլերի ամփոփման ձևերը:

**Սովորողների աշխատանքի ընթացքը**

- Սովորողների կազմակերպվածության և ակտիվության ապահովումը դասի տարբեր փուլերում:
- Աշխատանքի մեթոդների և հնարքների իրականացման աստիճանը:
- Ուսուցչի, առարկայի, դասի, տնային հանձնարարության նկատմամբ վերաբերմունքը:
- Հիմնական գիտելիքների և կարողությունների յուրացման աստիճանը:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստեղծարար կիրառման հմտությունը:
- Դասի ընդհանրական արդյունքները:
- Դասի պլանի կատարումը:
- Դասի նպատակի իրականացման աստիճանը:
- Սովորողների գործունեության ձևերի և գիտելիքների յուրացման աստիճանները՝ գիտելիքների յուրացում դաստիարակության, ըմբռնման և հիշման մակարդակում,

կիրառում նմանատիպ իրավիճակներում,
կիրառում նոր իրավիճակում:

- Վարած դասից (կամ նրա առանձին փուլերից) բավարարվածությունը (անբավարարվածությունը)
- Վարած դասի օբյեկտիվ գնահատում
- Թերությունները վերացնելուն միտված առաջարկներ

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 4

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**
**Թեմա**
**Դասի տևողությունը**
**Դասի նպատակը**
**Խնդիրները՝**

- Կրթական
- Զարգացնող
- Դաստիարակչական

**Դասի ավարտին սովորողը պետք է՝**

- Իմանա
- Կարողանա
- Տիրապետի
- Գիտակցի

**Անհրաժեշտ սարքավորումներ**
**Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ**
**Դասի ընթացքը**
**Դասի խթանում**
**Հաշվառում**
**Տնային հանձնարարության ստուգում**
**Դասի թեմայի մեկնաբանություն**
**Դասի իմաստի ընկալում**
**Դասի կշռադատում**
**Գնահատում**
**Անդրադարձ**

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 5

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**
**Թեմա**
**Օգտագործվող նյութեր**
**Դասի նպատակ՝**

- Սովորողներն արդեն գիտեն
- Սովորողները կիմանան
- Սովորողները կօգտագործեն նոր գիտելիքները հաջորդ դասերին
- Դասի թեման կապվում է իրական կյանքին հետևյալ կերպ

**Վերջնարդյունքներ**
**Տերմիններ**
**Տնային աշխատանք**
**Դասի ընթացք**
**Հարցադրումներով դասավանդում**

- **Պատասխանում են հարցերին**
- **Գրի են առնում սեփական մտքերը**
- **Խմբերում քննարկում են իրենց գրառումները**
- **Բարձրաձայնում են մեկական գաղափար**
- **Դասարանը քննարկում է բոլոր տարաձայնությունները**
- **Կատարում են գործնական առաջադրանք**
- **Աշակերտները տալիս են իրենց հուզող հարցերը**

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 6

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**
**Թեմա**
**Օգտագործվող նյութեր**
**Դասի նպատակ՝**

- Սովորողներն արդեն գիտեն
- Դասին սովորողները կիմանան
- Սովորողները կօգտագործեն նոր գիտելիքները հաջորդ դասերին
- Դասի թեման կապվում է իրական կյանքին հետևյալ կերպ

**Վերջնարդյունքներ**
**Տերմիններ**
**Տնային աշխատանք**
**Դասի ընթացք**
**Ձևանմուշներով բացատրություն**

- **Հետևել խնդրի լուծմանը**
- **Բաժանվում են զույգերի**
- **Յուրաքանչյուր զույգ կազմում է նմանատիպ խնդիր**
- **Ուսումնասիրել տեքստը**
- **Ուսումնասիրում են ձևանմուշները**
- **Քննարկում են ձևանմուշը**
- **Աշակերտները պատասխանում են հարցերին**
- **Բաժանվում են խմբերի**
- **Ուսումնասիրում են քայլաշարը**
- **Անդրադարձ դասին**

Դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակ 7

**Հեղինակ**
**Առարկա**
**Դասարան և կիսամյակ**
**Ամիս/ամսաթիվ**
**Աշակերտների քանակ**
**Դասի թեմա**

<table>
<tr><td>Դասի նպատակը<br>Դասի ավարտին աշակերտները կկարողանան …</td><td>Կարևոր դրույթները<br>Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք աշակերտը պետք է սովորի</td><td>Անհրաժեշտ նյութերը, պարագաներ<br>Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:</td></tr>
<tr><td></td><td></td><td>Դասի սկիզբ<br>Նոր նյութի ներկայացում<br>Ուղղորդված աշխատանք<br>Ինքնուրույն աշխատանք<br>Դասի ավարտ</td></tr>
<tr><td colspan="3">Դասարանի, դասի նախապատրաստում<br>Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին, երբ աշակերտները մտնում են դասարան</td></tr>
<tr><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="3">Գնատահում<br>Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)</td></tr>
<tr><td colspan="3"></td></tr>
</table>

Գնահատման ռուբրիկի նմուշ-օրինակ 1

Պրոբլեմային իրավիճակ

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| Խնդրի ճանաչում | Չեմ սպասել բարդ նախագծերում նման խնդիրների ի հայտ գալուն: | Երբեմն սպասում եմ նման խնդիրներ բարդ նախագծերում, բայց որպես կանոն չեմ մտածում, թե ինչպես կարող եմ դրանցից խուսափել: | Սպասում եմ բարդ նախագծերում նման խնդիրների և մտածում եմ, թե ինչպես է հնարավոր դրանցից խուսափել: | Սպասում եմ բարդ նախագծերում նման խնդիրների ի հայտ գալուն և մտածում եմ, ինչպես դրանք լուծեմ, մինչև ի հայտ գալը: |
| Տեղին տեղեկատվության ճանաչում | Խնդիրներ լուծելիս հաճախ բաց եմ թողնում կարևոր տեղեկատվությունը: | Երբեմն ինձ օգնություն է անհրաժեշտ, որպեսզի խնդիր լուծելիս գտնեմ/բացահայտեմ կարևոր տեղեկատվությունը: | Խնդիրներ լուծելիս ես տարանջատում եմ կարևոր տեղեկատվությունը ոչ կարևորից: | Ես հստակորեն բացահայտում եմ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ կարևոր տեղեկատվությունը: |
| Խնդրի վերլուծություն | Ես սովորաբար սկսում եմ լուծել խնդիրը, մինչև դրա մասին մտածելը: | Երբեմն ես սկսում եմ լուծել խնդիրը առանց նախօրոք դրա մասին մտածելու: | Ես զգուշորեն մտածում եմ խնդրի մասին, մինչև լուծել փորձելը: | Ես զգուշորեն վերլուծում եմ խնդրի բոլոր առանձնահատկությունները մինչև դրա լուծելը: |
| Ռազմավարությունների օգտագործում | Ես չեմ օգտագործում առարկային հատուկ ռազմավարություններ, գործիքներ կամ գիտելիք խնդիրը լուծելու համար: | Եթե ինձ հիշեցնում են, ապա օգտագործում եմ առարկային հատուկ ռազմավարություններ, գործիքներ և գիտելիք խնդիրը լուծելու համար: | Ես օգտագործում եմ առարկային հատուկ ռազմավարություններ, գործիքներ և գիտելիք, խնդիրը լուծելու համար: | Ես օգտագործում եմ այն ռազմավարությունները և գործիքները, որոնք սովորել եմ և առարկային հատուկ գիտելիք, որպեսզի լուծեմ խնդիրը, նույնիսկ եթե դրանք դպրոցական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հանձնարարությունների մաս չեն կազմում: |
| Անդրադարձ | Խնդիրը լուծելուց հետո ես շատ հազվադեպ եմ վերադառնում և մտածում այն մասին, թե ինչպես եմ լուծել խնդիրը: | Խնդիրը լուծելուց հետո, ես երբեմն վերադառնում և մտածում եմ այն մասին, թե ինչպես եմ այն լուծել: | Ես անդրադառնում եմ իմ խնդրի լուծման գործընթացին, մտածելով այն մասին թե ինչն եմ լավ արել, իսկ ինչը կարող էի ավելի լավ անել: | Ես անդրադառնում եմ խնդիրը լուծելու գործընթացին և գնահատում եմ, թե որքանով լավ այն աշխատեց, և կարիքի դեպքում փոփոխում եմ գործընթացը: |

Գնահատման ռուբրիկի նմուշ-օրինակ 3

Պրոբլեմային իրավիճակ

| Ցուցիչներ | 0 | 1 | 2 | 3 |
|---|---|---|---|---|
| Խնդրի պատկերավոր ներկայացումը, նկարագրությունը | Ամբողջ նկարագրությունը սխալ է արված և բազմաթիվ վրիպումներ է պարունակում: | Խնդրի մեկ մասից ավելին լիարժեք չէ նկարագրված և սխալներ է պարունակում: | Խնդրի մեկ մասն է սխալ կամ ոչ լիարժեք: | Պատասխանը պարունակում է խնդրի ճիշտ և լիարժեք նկարագրություն: |
| Առարկային հատուկ մոտեցում | Բոլոր ընտրված գաղափարները և սկզբունքները անտեղի են: | Ավելի քան մեկ առարկային հատուկ սկզբունք սակավ ճշգրիտ է կամ ոչ լիարժեք: | Առարկային հատուկ մոտեցումը, որն օգտագործվել է, սակավ ճշգրիտ է կամ ոչ լիարժեք: | Պատասխանում օգտագործված է առարկային հատուկ ճիշտ և լիարժեք մոտեցում |
| Առարկային հատուկ | Բոլոր հատուկ | Ավելի քան մեկ | Առարկային հատուկ | Պատասխանում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գաղափարների հատուկ կիրառություն | կիրառությունները տեղին չեն կամ սխալներ են պարունակում: | առարկային հատուկ գաղափար լիարժեք չէ կամ սխալներ է պարունակում : | գաղափարներից մեկի օգտագործումը լիարժեք չէ, կամ սխալներ է պարունակում: | օգտագործված է ճիշտ, լիարժեք և տեղին առարկային հատուկ գաղափար: |

Գնահատման ռուբրիկի նմուշ-օրինակ 4

Քննադատական մտածողություն

| Ցուցիչներ | 0 | 1 | 2 | 3 |
|---|---|---|---|---|
| **Բացահայտեք/ճանաչեք ենթադրությունները** | Ընդհանրապես չեք կարողացել ճանաչել ենթադրությունները: | Չեք կարողացել ճանաչել ենթադրությունները, բայց առաջ տանող գաղափարները տեսնում եք: | Կարողացել եք ճանաչել ենթադրությունները, բայց դրանք ճշգրիտ չեն: | Կարողացել եք ճիշտ ճանաչել ենթադրությունները: |
| **Ձևակերպեք գլխավոր խնդիրը** | Ընդհանրապես չեք կարողացել ձևակերպել գլխավոր խնդիրը: | Չեք կարողացել ձևակերպել գլխավոր խնդիրը, բայց այդ ուղղության վրա եք: | Կարողացել եք ձևակերպել գլխավոր խնդիրը, բայց ոչ ճշգրիտը: | Կարողացել եք ճշգրիտ ձևակերպել գլխավոր խնդիրը: |
| **Որոշեք տրված պայմանների հետևանքները** | Ընդհանրապես չեք կարողացել որոշել տրված պայմանների հետևանքները: | Չեք կարողացել որոշել տրված պայմանների հետևանքները, բայց այդ ուղղության վրա եք: | Կարողացել եք որոշել տրված պայմանների հետևանքները, բայց դրանք ճշգրիտ չեն: | Կարողացել եք ճիշտ որոշել տրված պայմանների հետևանքները: |
| **Գտեք շեղումները** | Ընդհանրապես չեք կարողացել գտնել շեղումը: | Չեք կարողացել գտնել շեղումը, բայց մոտ եք: | Կարողացել եք գտնել շեղումը, բայց այն ճշգրիտ չէ: | Կարողացել եք ճիշտ գտնել շեղումը: |
| **Խնդիրը լուծելիս բացեք տվյալները, գաղափաները և թեորեմները** | Ընդհանրապես չեք կարողացել խնդիրը լուծելիս բացել տվյալները, գաղափարները և | Չեք կարողացել խնդիրը լուծելիս բացել տվյալները, գաղափարները և թեորեմները, բայց այդ | Կարողացել եք խնդիրը լուծելիս բացել տվյալները, գաղափարները և թեորեմները, բայց ոչ | Կարողացել եք խնդիրը լուծելիս ճիշտ բացել տվյալները, գաղափարները և թեորեմները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թեորեմները: | ուղղության վրա եք: | ճշգրիտ: | |
| **Գնահատեք խնդրի լուծմանը առնչվող փաստարկները** | Ընդհանրապես չեք կարողացել գնահատել խնդրի լուծմանն առնչվող փաստարկները: | Չեք կարողացել գնահատել խնդրի լուծմանն առնչվող փաստարկները, բայց այդ ուղղության վրա եք: | Կարողացել եք գնահատել խնդրի լուծմանը առնչվող փաստարկները, բայց ոչ ճշգրիտ: | Կարողացել եք ճիշտ գնահատել խնդրի լուծմանն առնչվող փաստարկները: |

Գնահատման ռուբրիկի նմուշ-օրինակ 5

Քննադատական մտածողություն

| Միավոր | Քննադատական մտածողության կարողունակություն | Սկսնակ<br>1 միավոր | Զարգացող<br>2 միավոր | Կարող<br>3 միավոր | Հասած<br>4 միավոր |
|---|---|---|---|---|---|
| | **Քննադատական դիտարկում**<br>Հաղորդակցությունը կամ բնական երևույթները ակտիվորեն և հմտորեն կարդալու, լսելու և դիտարկելու կարողություն: | **Ակտիվ Ըմբռնում**<br>Սովորողը կարող է ամփոփել նյութը, ճանաչել դրա կապը/առնչությունը թեմային և ենթատեքստը, և կատարել դրանից որոշակի եզրահանգումներ: | **Ակտիվ Հարցում**<br>Սովորողը կարող է տալ նյութին առնչվող տեղին հարցեր և կարող է սկսել փնտրել այդ հարցերի պատասխանները: | **Ակտիվ Ընդհանրացում**<br>Սովորողը կարող է ճանաչել առարկային, ոլորտում լավ աղբյուրները և գործընթացները և հասկանում է այն ընդհանրացումները, որոնք հիմնավորում են լավը լինելու այս | **Ակտիվ Ինքնազննում**<br>Աշակերտը կարող է օգտագործել մյուսների համար կիրառվող դիտարկման նույն հմտությունները ինքն իրեն դիտարկելու համար, ճանաչելով սեփական ուժեղ կողմերը, իր կանխակալությունը և բարելավման ենթակա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | գնահատականը: | ոլորտները: |
| | **Քննադատական հաղորդակցություն** Ռացիոնալ կերպով գրելու, խոսելու և ներկայացնելու կարողություն և դրա օգտագործումը խնդիրը ուսումնասիրելու համար: | **Բազային հաղորդակցություն** Սովորողը կարող է հաղորդակցվել, բայց բովանդակային և հիմնավորման սխալներ է անում կամ չի ընկալում իր լսարանին: | **Ընդունելի մակարդակի հաղորդակցություն** Սովորողը կարող է հստակ և ճշգրտորեն հաղորդակցվել և ունի համատեքստի որոշակի զգացում: | **Ողջամիտ մակարդակի հաղորդակցություն** Սովորողի հաղորդակցությունը հստակ է, ճշգրիտ և տեղին, և պատճառաբանում և փաստարկներով հիմնավորում է իր համոզմունքները: | **Հմուտ և ակտիվ հաղորդակցություն** Սովորողը կարող է հստակ և ճշգրտորեն հաղորդել ուժեղ փաստարկներ, որոնցում առկա է լսարանին համապատասխան համապարփակություն և համառոտություն: |
| | **Քննադատական գիտելիք** | **Հիմնական գաղափարների ընկալում** Սովորողը կարող է սեփական բառերով բացատրել քննադատական մտածողության դասընթացում առկա գաղափարների մեծ մասը (Բլումի ցածրագույն երկրորդ մակարդակ): | **Հիմնական գաղափարների կիրառություն** Սովորողը կարող է ճանաչել մոլորությունները, փաստարկների ոճերը և այլն, իրական կյանքի իրավիճակներում (Բլումի երրորդ մակարդակ): | **Հիմնական գաղափարների սինթեզ և վերլուծություն** Սովորողը հասկանում է, թե ինչպես են գաղափարները միմյանց հետ կապվում, օրինակ, թե ինչպես ձևավորել փաստարկի տեսությունը (Բլումի չորրորդ և հինգերորդ մակարդակ): | **Հիմնական գաղափարների գնահատում** Սովորողը կարող է հասկանալ, թե ինչու են քննադատական մտածողության հիմնական գաղափարները ներկայացված այնպես, ինչպես ներկայացված են: Նա կարող է, օրինակ, բացատրել, թե ինչու են տարբեր մոլորությունները դժվարացնում հիմնավորումը (Բլումի ամենաբարձր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մակարդակ): |
| | **Քննադատական հնարքներ** Հմտություններ, որոնք դասավանդում են քննադատական մտածողության ստանդարտ դասընթացի ժամանակ, ինչպիսիք են իմաստի պարզաբանում, կամ փաստարկների գնահատում | **Ոչ հմուտ մեկնաբանում և գնահատում** Սովորողը անշնորհք կերպով է կարդում համատեքստը, պարզաբանում իմաստը և գանահատում փաստարկները: Նա նաև դժվարանում է դատել փաստարկների հիման վրա, ելնելով դրանց արժանիքներից, և ավելի շատ հիմնվում է սեփական համոզմունքների վրա: | **Հմուտ մեկնաբանում և գնահատում** Եթե հարցնենք, սովորողը կկարողանա բացատրել համատեքստը և ճանաչի հստակ սահմանումներն ու ուժեղ փաստարկները: | **Հմուտ և ակտիվ մեկնաբանում և գնահատում** Սովորողը օգտագործում է իր հմտությունները համատեքստը կարդալու, դրա իմաստը մեկնաբանելու և փաստարկները գնահատելու համար, և դրա միջոցով է ակտիվորեն հետզոտում դասընթացի նյութերը: | **Հմուտ, ակտիվ և ինքնաիրազեկ մեկնաբանում և գնահատում** Սովորողը ոչ միայն կարող է բացատրել համատեքստը և գտնել հստակ սահմանումներն ու ուժեղ փաստարկները, բայց նաև գործի է դնում այդ հմտությունները սեփական մտածողությունը և գրավոր մտքերը բարելավելու համար: |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ** | | | | |

Նախագծային աշխատանք

| | Զարգացնում է | | | Նվաճել է, հասել է |
|---|---|---|---|---|
| **Աշխատելու մշակույթը**<br>• Լավ է պլանավորել<br>• Ժամանակը արդյունավետ է օգտագործել<br>• Աշխատանքին աջակցելու համար օգտագործել է տարրատեսակ գործիքներ և ռազմավարություններ | Նախագծի իրականացման համար և հաջության հասնելու համար ձեր **պլանը սահմափակ է**:Դուք **գրեթե չեք օգտագործում** ռազմավարություններ և գործիքներ, որպեսզի սովորեք և աջակցեք ձեր աշխատանքին: | Դուք **որոշակի պլան ունեցել եք,** թե ինչպես կատարել աշխատանքը և ինչպես հաջողության հասնել: Հավատարիմ մնացեք ձեր ծրագրին, եթե նույնիսկ կարծում եք, որ այն արդյունավետ չէ: Դուք **մեկ-երկու ռազմավարություն եք օգտագործում՝** սովորելու և աշխատանքին աջակցելու համար: | Դուք ունեք **լավ մշակված պլան** և հետևում եք այդ պլանին: Հարմարեցրեք ձեր պլանը աշխատանքի առաջընթացին միայն այն դեպքում, երբ խնդիրներ են ծագում: **Պլանավորեք թե ինչպես եք իմանալու, որ հաջողում եք**, որպեսզի դրա մեջ լինի ճիշտ ուղղության վրա մնալու համար բավարար մանրամասներ: | Դուք ունեք լավ մշակված պլան, հետևում եք այդ պլանին և հարմարեցնում եք այն երբ զգում եք, որ պլանն այլևս չի համապատասխանում ձեր նպատակներին: Դուք հետևողականորեն և պատրաստակամությամբ օգտագործում եք սովորելու գործիքների և ռազմավարությունների լայն ընտրանի: |
| **Տեղեկատվության հավաքագրում և կազմակերպում**<br>• Սովորողը ցուցաբերում է բովանդակության, բանաձևերի և հավասարումների ու դրանց առնչվող համակարգերի | Որոշակի պահանջվող **տեղեկատվություն բացակայում է**, կամ այն տեղեկատվությունը, որը հավաքագրել, դասավորել, վերլուծել և մեկնաբանել եք, հնարավոր է **ոչ ճիշտ է և ոչ ամբողջական**: | Պահանջվող **տեղեկատվության մեծ մասը** հավաքագրել եք, դասավորել եք, վերլուծել եք և մեկնաբանել եք: Չնայած դրան, որոշ գաղափարներ հնարավոր է շատ **ընդհանրական են և** | Պահանջվող **տեղեկատվության մեծ մասը** հավաքագրել եք, դասավորել եք, վերլուծել և ճիշտ մեկնաբանել եք: Սակայն առկա են **միայն որոշ մանրամասներ**: | Պահանջվող **ամբողջ տեղեկատվությունը** հավաքագրել եք, դասավորել, վերլուծել և ճիշտ մեկնաբանել և առկա են տեղեկատվության **զգալի քանակով մանրամասներ**: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| իմացություն | | **մակերեսային**: | | |
| **Ներկայացում և գաղափարների աջակցություն**<br>• Ներկայացման և գրավոր նյութի ստեղծագործականություն<br>• Օգտագործվում է բառապաշար/լեզու և օրինակներ, որոնք աջակցում են գաղափարներին | Աշխատանքի արդյունքում **չի երևում** որևէ ինքնատիպ միտք: Կատարված աշխատանքը **նվազագույն ծավալի է**, որը բնույթով շատ **ընդհանրական** է: Շատ **քիչ կամ բացարձակ փորձ չի արվել** օգտագործել տեղեկատվությունը տարբեր ձևերով ներկայացնելու, հաղորդելու և գաղափարները հիմնավորելու համար: | Աշխատանքի արդյունքում **առկա է շատ քիչ** ինքնատիպ/օրիգինալ միտք: Աշխատանքը **նվազագույն ծավալով** եք ներկայացրել և այն ունի շատ **ընդհանրական** բնույթ: **Որոշակի փորձ կատարել եք** տեղեկատվությունը տարբեր ձևերով ներկայացնելու, հաղորդելու և գաղափարները հիմնավորելու համար | Աշխատանքի արդյունքում երևում են **որոշ** ինքնատիպ մտքեր: Աշխատանքում երևում են **նոր** գաղափարներ **և խորքային գիտելիք**: Գաղափարները ներկայացնելու, հաղորդելու և հիմնավորելու համար **օգտագործել եք տարատեսակ եղանակներ**: | Աշխատանքում տեսանելի են **մեծ թվով** ինքնատիպ մտքեր: Գաղափարները **ստեղծագործական են և հնարամիտ**: Գաղափարները ներկայացնելու, հաղորդելու և հիմնավորելու համար **օգտագործել եք տարատեսակ եղանակներ**: |
| **Ճշգրտության նկատառումներ**<br>• Քերականություն, ուղղագրություն, ընտրության նկատառումներ<br>• Օգտագործված աղբյուրների ցանկ և հղումներ | Շատ **մտքեր** հնարավոր է **պարզ չեն** և **հաղորդակցման սխալները** կարող են լրջորեն վնասել մտքերի հստակությանը: Գրված նյութը ցույց է տալիս, որ նախադասությունների կառուցվածքի, տեղին օգտագործման, | Մտքերի մեծ մասը **հասկանելի ձևով է հաղորդվում**, բայց մտքերի հստակությունը կարող է տուժել **հաղորդակցության սխալներից**: Գրված նյութում երևում է, որ նախադասությունների կառուցվածքին, տեղին օգտագործմանը, | **Բառերի և կառուցվածքների ընտրությունը** և օգտագործումը հաճախ **արդյունավետ է** արված: Այս գրավոր նյութը ցույց է տալիս, որ նախադասությունների կառուցվածքին, տեղին օգտագործմանը, քերականությանը | Բառերի և կառուցվածքների ընտրությունը **արդյունավետ է**: Գրավոր նյութը ցույց է տալիս, որ **վստահաբար տիրապետում եք** նախադասության կառուցվածքին, տեղին օգտագործմանը, քերականությանը: Օգտագործված աղբյուրների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քերականության վերաբերյալ **տատանվել եք**: Աղբյուրների և հղումների ցանկը **բացակայում է**: | քերականությանը **որոշակիորեն բավարար տիրապետում եք**: Աղբյուրների հղումները **մասնակի են**: | **տիրապետելու կարողունակություն ունեք**: Աղբյուրների ցանկը և հղումը **պատշաճ ձևաչափով** է ներկայացված: | ցանկը և հղումները ներկայացված են **առանձին էջի վրա պատշաճ ձևաչափով**: |
| **Խոսքը հոդակապ է և արժեքավոր**<br>• Ինքնագնահատում<br>• Հետադարձ կապը ինտեգրված է վերջնական արդյունքի հետ<br>• Ընկերների նախագծերի գնահատում | **Հնարավոր է ուսումնասիրել եք** այլ աղբյուրներից ստացված հետադարձ կապը, բայց **դժվարացել եք,** ի պատասխան տրված անդրադարձի, **հարմարեցնել/փոփոխել** աշխատանքը: **Օգնության կարիք ունեք** ռուբրիկները օգտագործելու, նմուշ օրինակներից օգտվելու և արձագանքը դիտարկելու, որպեսզի քննության ենթարկեք ձեր գործընթացները և ռազմավարությունները: Ձեր ընկերներին **հետադարձ կապ չեք տվել**, կամ տվել եք շատ **ընդհանրական և անորոշ** անդրադարձ: | **Ուսումնասիրել եք** այլ աղբյուրներից տրված հետադարձ կապը, բայց **կամ հարմարեցրել/փոփոխել եք աշխատանքը, կամ ոչ**: **Պատշաճ կերպով** օգտագործել եք ռուբրիկները, նմուշ օրինակները և հետադարձ կապը ձեր գործընթացները և ռազմավարությունները քննելու համար: **Տվել եք կանխատեսելի խորհուրդներ** մյուսների աշխատանքը բարելավելու համար: | **Հավաքագրում և ուսումնասիրում եք** բազմաթիվ աղբյուրներից ստացվող հետադարձ կապը և **հարմարեցնում/փոփոխում եք** աշխատանքը: **Որոշակի արդյունավետությամբ եք օգտագործում** ռուբրիկները, նմուշ օրինակները և հետադարձ կապը՝ գործընթացները և ռազմավարությունը քննելու համար: Տրամադրում եք **մտածելու տեղ տվող** հետադարձ կապ: | **Հավաքագրում և ուսումնասիրում եք** բազմաթիվ աղբյուրներից ստացվող հետադարձ կապը և **արդյունավետորեն փոփոխում/հարմարեցնում** աշխատանքը: **Արդյուավետորեն են օգտագործում** ռուբրիկները, նմուշ օրինակները և հետադարձ կապը՝ գործընթացները և ռազմավարությունները քննելու համար: Տվել են ն**շանակալի խորհուրդներ** և **խորքային** հետադարձ կապ: |